ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **08/11/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Հովիկ Գոգոյանը, Գոհար Հովհաննիսյանը, Գրիգոր Ղարիբյանը, Արթուր Մելոյանը, Ռուբեն Սաֆարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նարինե Խաչատրյան, Ռիմա Մանուկյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 08-Ի ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 6-րդ նստաշրջանի 2024 թվականի նոյեմբերի 08-ի թիվ 13 հերթական նիստի օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք -5 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի կազմում ներառված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի երրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.

3) Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը անհատույց մշտական օգտագործման տրամադրելու մասին.

4) Դրամական օգնություն տրամադրելու մասին.

5) Բնակելի համալիրի կառուցման նախնական համաձայնություն տալու մասին

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 157-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

7) Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարը վերանայելու մասին.

8) Համայնքային սեփականություն համարվող հողամասը առանց մրցութի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.

9) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին.

10) Արտաշ Հունանյանին գումար վերադարձնելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 16-ի N39 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին.

11) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 126/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ -5 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՋՄՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետի, « Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, « Քաղաքաշինության մասին» օրենքի 143 –րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելված 1-ի 54-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-13 եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 14-ի N 01/03.1/05641-2024 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք -5 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի կազմում ներառված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերը՝ համաձայն հավելված:

2. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ընդգրկել տարածական պլանավորման փաստաթղթերի իրականացման միջոցառումներն՝ ըստ առաջնահերթության, հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման մատյանում, հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3. Սահմանել, որ տարածական պլանավորման փատաթղթերի նախագծով սահմանված հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ըստ տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծով նախատեսված զարգացման միջոցառումների առաջնահերթության:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և « Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի երրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել «Մեղրաձոր գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 1:

2. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել «Արտավազ գյուղի նախադրոցական ուսումնական հաստատություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 2:

3. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել « Աղավնաձոր գյուղի նախադրոցական ուսումնական հաստատություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 3:

4. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել « Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ հավելված 4:

5. Համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 129/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով. հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Ծաղկաձոր համայնքի արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 14-ի N ակտը

1.Ծաղկաձոր համայնքի բյուջեի <<այլ նպաստեր>> 4729 հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրել դրամական օգնություն 400 000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Ծաղկաձոր համայնքի, Աղավնաձոր գյուղի 3-րդ փողոց, 6 հասցեի բնակիչ՝ Մեխակ Աղասու Մեխակյանին, 2024 թվականի մարտի 30-ին հրդեհի հետևանքով այրվել է անասնագոմը, տանիքում գտնվող անասնակերը և ջերմոցի ծածկը, որի հետևանքով կրել է մեծ վնասներ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 130/

Լսեցին

ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի և հիմք ընդունելով 2024 թվականի սեպտեմբերի 30-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը

1. Տալ նախնական համաձայնություն՝ Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր , Տանձաղբյոր փողոց 1 հասցեում գտնվող, Արսեն Աշոտի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,6 հա մակերեսով (ծածկագիր՝ 07-005-0024-0930) բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված ՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասում բնակելի համալիրի կառուցման համար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» N 157-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) Տող 11304 - Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողեզրում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. Համար«1120.0» թիվը փոխարինել «638.0» թվով.
2) Տող 11307 - Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար«12930.0» թիվը փոխարինել «14007.4» թվով.
3) Տող 11308 - Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում Ա ռևտրի և ծառայությունների մասին Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար «30.0» թիվը փոխարինել «0.0» թվով.

4) Տող 11309 - Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար «6175.0» թիվը փոխարինել «6669.7»թվով.

5) Տող 11310 - Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար «8525.0» թիվը փոխարինել «9039.2»թվով.

6) Տող 11312 - Ավագանու սահմանվ. կարգին ու պայման-ին համ.՝ համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. միջպետ. ու հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի օտարման շերտերում և պաշտպ. գոտի-ում տեղադ. գովազդ-րի թույլտվ-րի (բացառ. Երևան քաղաքի) «10126.0» թիվը փոխարինել «10900.0»թվով,

7) Տող 11318 - Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար «460.0» թիվը փոխարինել «700.0»թվով.

8) Տող 1255 - Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) «762.8» թիվը փոխարինել «653.6» թվով.

9) Տող 1261 - Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) 85165.1» թիվը փոխարինել «123766.3» թվով.

10) Տող 1362 - Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից «0.0» թիվը փոխարինել «1400.0» թվով.

11) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված «4112» (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) «87022.5» թիվը փոխարինել «100646.0» թվով.

12) Բաժին 1 խումբ 6 դաս 1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «21540.0» թիվը փոխարինել «22525.5» թվով.

13) Բաժին 4 խումբ 2 դաս 4 (Ոռոգում) հոդված «4213» (Կոմունալ ծառայություններ) «1720.0» թիվը փոխարինել «5066.0» թվով.

14) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված «5113» (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) «580000.0» թիվը փոխարինել «608601.2» թվով.

15) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված «5134» (Նախագծահետազոտական ծախսեր) «10000.0» թիվը փոխարինել «18000.0» թվով.

16) Բաժին 5 խումբ 1 դաս 1 (Աղբահանում) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «127058.7» թիվը փոխարինել «132788.7» թվով.

17) Բաժին 6 խումբ 3 դաս 1 (Ջրամատակարարում) հոդված «4241» (Մասնագիտական *ծառայություններ) «700.0» թիվը փոխարինել «900.0» թվով.*

18) Բաժին 8 խումբ 2 դաս 1 (Գրադարաններ) հոդված «5132» (Ոչ նյութական հիմնական միջոցներ) «0.0» թիվը փոխարինել «1000.0» թվով.

19) Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված «5134» (Նախագծահետազոտական ծախսեր) «4000.0» թիվը փոխարինել «5000.0» թվով.
20) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված «4239» (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) «5000.0» թիվը փոխարինել «20000.0» թվով.
21) Բաժին 9 խումբ 5 դաս 1 (Արտադպրոցական դաստիարակություն) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «25054.0» թիվը փոխարինել «28164.0» թվով.
22) Բաժին 10 խումբ 7 դաս 1 (Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված «4729» (Այլ նպաստներ բյուջեից) «6000.0» թիվը փոխարինել «7500.0» թվով.
23) Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված «4891»(Պահուստային միջոցներ) «169828,3» թիվը փոխարինել «130212.4» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 132-Ն/

Լսեցին
ԱԼԲԵՐՏ ԱՐՄԵՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Ալբերտ Արմենի Ստեփանյանի դիմումը

1 .Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, քաղաք Ծաղկաձոր, Օլիմպիական փողոց 11-րդ հասցեում գտնվող, Ալբերտ Արմենի Ստեփանյանին պատկանող 1,8 հա ընդհանուր հողամասից՝ ծածկագիր 07-005-0026-0949, 0,9 հա սեփականություն, 0,90 հա վարձակալություն, վարձակալությամբ տրված 0,90 հա հողամասի համար սահմանված տարեկան վարձավճարը 253 865 / երկու հարյուր հիսուն երեք ութ հարյուր վաթսուն հինգ / Հայաստանի Հանրպետության դրամի փոխարեն հողամասի տարեկան վարձավճար սահմանել -------- Հայաստանի Հանրպետության դրամ:

2. Մերժել՝ վարձակալի փոփոխման պատճառով, 0.90 հա վարձակալությամբ տրված հողամասի վարձակալ Ալբերտ Արմենի Ստեփանյանից վարձակալությունը փոխվել է Վահե Ռուբենի Մանուկյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 133/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով «Վիվա Արմենիա » փակ բաժնետիրական ընկերության գրությունը՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց 3/4 հասցեում գտնվող,հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,002 հա (ծածկագիր 07-005-0001-0002) հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 10 (տաս) տարի ժամկետով օգտագործման տրամադրել «Վիվա Արմենիա » փակ բաժնետիրական ընկերության շարժական կայան տեղադրելու նպատակով :
2. Սահմանել ամսեկան վարձավճար 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 134/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով « ՔԱՂ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված գնահատման վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

Թույլատրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Կ. Անդրեասի փողոց 13 շենք 13 հասցեում գտնվող սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդային կարգով օտարել և սահմանել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 135/

Լսեցին
ԱՐՏԱՇ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N39 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42 -րդ կետերով և « Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով , հիմք ընդունելով Արտաշ Հունանյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի , Մարմարիկ բնակավայրի 1-ին փողոցի 4-րդ նրբացքի 14 հասցեի բնակիչ՝ Արտաշ Հունանյանի կողմից համայնքի բյուջե Մարմարիկ բնակավայրի 900125007337 հաշվեհամարին՝ հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու համար փոխանցված 102 500 (մեկ հարյուր երկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը հետ վերադարձնել:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 16-ի « Մեղրաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքը ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարելու մասին» N 39 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 136/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-

ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 22-ի N 2/փ- 414 եզրակացությունը և Արտակ Վաչագանի Ավետիսյանի դիմումը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, գյուղ Արտավազ գյուղ Փյունիկ 1-ին փողոց 1/4 հողամաս հասցեում գտնվող, Արտակ Վաչագանի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, էներգետիկայի ՝ նպատակային և գործառնական նշանակության 0,11 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 07-017-0050-0008) հողամասը փոփոխել բնակավայրերի, հասարակական կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 137/

Ավագանու անդամներ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԚ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյանը